ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Խոյ համայնքի <<Շահումյան մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դաստիարակների թափուր պաշտոնի համար:

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի Խոյ համայնքի <<Շահումյանի մանկապարտեզ>>-ի հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար:

1. Կրտսեր 2-րդ խմբի դաստիարակի (1,12 դրույքաչափով)

2. Միջին խմբի դաստիարակի (1,12դրույքաչափով)

3. Դաստիարակի (1,12դրույքաչափ)

4. Երաժշտության դաստիարակի (0.5դրույքաչափով)

Մրցույթին մասնակցելու համար ըստ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի 17փետրվարի 2022թ. թիվ 08-Ն հրամանի 12րդ կետի պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1)
2) կրթության մասին փաստաթուղթ(դիպլոմ)
3) անձը հաստատող փաստաթուղթ
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ(առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4)
6) 1լուսանկար՝ 3x4չափի
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8) Հայաստանի Հանրապետության արական քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական
9) Հրատարակված հոդվածներ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են ապրիլի 16ից մինչև մայիսի 6ը ներառյալ ,բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 Շահումյան բնակավայրի <<Շահումյան մանկապարտեզ>>Լ. Նավասարդյան փողոց 13/1կամ գ. Գեղակերտ Մաշտոցի փողոց 36Կրթության մշակույթի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին:

Մրցույթին կարող են մասնակցել կրթության և գիտության նախարարի 2011ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆավորակավորման պահանջներին համապատասխանող անձը,ըստորի անհրաժեշտէ՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր,դիպլոմավորված մասնագետ,մագիստրոս)մասնագիտական կրթություն՝ համապատասխանորակավորման կամ վերջին տասը տարվաընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվամանկավարժական գործունեության ստաժ:

Դաստիարակի թափուր հաստիքի մրցույթը տեղի կունենամայիսի 14-ին ժամը 12[00]-ին <<Շահումյանի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի շենքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք բնակավայր Շահումյան Լ.Նավասարդյան փող,13/1հասցեում:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ հաստատված հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը,և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացվում է առանձին՝ համաձայն ԿԳՄՍՆ հաստատված հարցաշարի: Տեղեկություններին համար զանգահարել 077200177կամ 077980606 հեռախոսահամարներով: